Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 2 -ի N 526 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՌՆԵՐ և ԴԱՄԲԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հարևանությամբ մոմավառության մատուռների և դամբարանի կառուցումը:<br>Հաշվի առնելով, որ տաճարի ներսում մոմավառության արդյունքում որմնանկարները կեղտոտվում և վնասվում են, խիստ անհրաժեշտություն է առաջացել առանձին մոմավառության մատուռներ կառուցելը: Դամբարանում են հանգրվանելու հայոց կաթողիկոսների աճյունները, որտեղ հավատացյալները հնարավորություն են ունենալու աղոթելու նրանց հիշատակի համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգտոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955թ., գրանցման թիվ՝ 0486313) |
| 4. | Ծրագրի կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի քաղաք Էջմիածին, հոգևոր: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,777,627,163 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ քաղաք Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մոմավառության մատուռների և դամբարանի հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 863,101,616 դրամի չափով:<br>2. Մոմավառության մատուռների և դամբարանի ջեռուցման, օդափոխման, օդորակման (HVAC) համակարգի տեղադրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2021 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 82,693,547 դրամի չափով:<br>3. Մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի կանաչապատման աշխատանքներ (տանիքի ջրամեկուսացում և ջերմամեկուսացում, բուսաճեցում): Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակա-հատվածում՝ 19,732,000 դրամի չափով:<br>- ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նյութերի, բույսերի, ոռոգման համակարգերի ներմուծում՝ 25,000,000 դրամ:<br>4. Մոմավառության մատուռների և դամբարանի հետին պարիսպի շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 15-ից 2020 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 62,000,000 դրամի չափով:<br>5. Պահակակետի կառույցի շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 15-ից 2020 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 35,000,000 դրամի չափով:<br>6. Տեխնիկական կառույցի՝ այդ թվում հասարակական սանհանգույցների շինարարական աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 15-ից 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 115,000,000 դրամի չափով:<br>7. Ջրամատակարարման, կոյուղու և դրենաժային համակարգի շինմոնտաժային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 20,000,000 դրամի չափով: |

| | | |
|---|---|---|
| | | 8. Մոմավառության մատուռների և դամբարանի էլեկտրական և ցածր լարման համակարգերի շինմոնտաժային աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2020 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 41,000,000 դրամի չափով:<br>9. Հաշմանդամների համար նախատեսված վերելակի տեղադրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի սեպտեմբերի 1-ից 2020 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 5,000,000 դրամի չափով:<br>– վերելակի ներմուծում՝ 9,600,000 դրամ<br>10. Լուսատուների ներմուծում: Նախատեսվում է իրականացնել 2020 թվականի հունիսի 1-ից 2020 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում 42,000,000 դրամի չափով:<br>11. Տեսաձայնային համակարգի տեղադրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից 2021 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ 75,000,000 դրամի չափով:<br>12. Մոմավառության մատուռների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից 2021 թվականի մարտի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ 125,580,000 դրամի չափով:<br>- գրանիտե սալահատակների ներմուծում՝ 24,420,000 դրամ<br>13. Ժամացույցի աշտարակին կից տարածքի բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից 2021 թվականի մարտի 25-ն ընկած ժամանակա-հատվածում՝ 8,550,000 դրամի չափով:<br>14. Մոմավառության մատուռների և դամբարանի ետնամասի կանաչապատման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից 2021 թվականի մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում՝ 107,350,000 դրամի չափով:<br>15. Խաչքարերի և այլ զարդաքանդակների փորագրման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունվարի 1-ից 2021 թվականի հունիսի 17-ն ընկած ժամանակահատվածում՝ 75,000,000 դրամի չափով:<br>16. Կահույքի մատակարարում: Նախատեսվում է իրականացնել 2021 թվականի հունիսի 18-ից 2021 թվականի դեկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում՝ 41,600,000 դրամի չափով: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Մոմավառության մատուռների և դամբարանի հիմքերի և պատերի ամրանավորման և բետոնային ու քարային աշխատանքներ ՝ 863,101,616 դրամ առանց ԱԱՀ-ի<br>2. Մոմավառության մատուռների և դամբարանի ջեռուցման, օդափոխման, օդորակման (HVAC) համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 82,693,547 դրամ առանց ԱԱՀ-ի<br>3. Մոմավառության մատուռների և դամբարանի տանիքի կանաչապատման աշխատանքներ (տանիքի ջրամեկուսացում և ջերմամեկուսացում, բուսաճեցում) ՝ 19,732,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>- ջրամեկուսացման և ջերմամեկուսացման նյութերի, բույսերի, ոռոգման համակարգերի ներմուծում՝ 25,000,000 դրամ<br>4. Մոմավառության մատուռների և դամբարանի հետին պարիսպի շինարարական աշխատանքներ՝ 62,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>5. Պահակակետի կառույցի շինարարական աշխատանքներ՝ 35,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>6. Տեխնիկական կառույցի՝ այդ թվում հասարակական սանհանգույցների շինարարական աշխատանքներ՝ 115,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>7. Ջրամատակարարման, կոյուղու և դրենաժային համակարգի շինմոնտաժային աշխատանքներ՝ 20,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>8. Մոմավառության մատուռների և դամբարանի էլեկտրական և ցածր լարման համակարգերի շինմոնտաժային աշխատանքներ ՝ 41,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>9. Հաշմանդամների համար նախատեսված վերելակի տեղադրման աշխատանքներ՝ 5,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>- վերելակի ներմուծում՝ 9,600,000 դրամ<br>10. Լուսատուների ներմուծում՝ 42,000,000 դրամ<br>11. Տեսաձայնային համակարգի տեղադրման աշխատանքներ՝ 75,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>12. Մոմավառության մատուռների և դամբարանի շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ՝ 125,580,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>- գրանիտե սալահատակների ներմուծում՝ 24,420,000 դրամ<br>13. Ժամացույցի աշտարակի կից տարածքի բարեկարգման աշխատանքներ ՝ 8,550,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>14. Մոմավառության մատուռների և դամբարանի ետնամասի կանաչապատման աշխատանքներ՝ 107,350,000 դրամ առանց ԱԱՀ-ի |

| | | |
|---|---|---|
| | | 15. Խաչքարերի և այլ զարդաքանդակների փորագրման աշխատանքներ ՝ 75,000,000 դրամ առանց ԱԱՀ-ի<br>16. Կահույքի մատակարարում ՝ 41,600,000 դրամ առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ